



ՀԵՌՈՒՍԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

27 փետրվարի 2023 թվականի թիվ 6-Լ

ք. Երևան

ՀԵՌՈՒՍԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 19-Ի ԹԻՎ 32-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» 33-րդ հոդվածի 3-րդ մասով, 34-րդ հոդվածով, «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով 2022 թվականի դեկտեմբերի 23-ի «Հանրային ծառայության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» թիվ ՀՕ-540-Ն օրենքը՝

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը **որոշում է.**

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի 2021 թվականի փետրվարի 19-ի «Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 32-Լ որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ լրացումները.

1. Որոշմամբ հաստատված Հավելվածի 46-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 10-րդ և 11-րդ ենթակետերով.

«10) ապահովում է Հանձնաժողովի իրավասության շրջանակներում իրականացվող հակակոռուպցիոն միջոցառումների և Հանձնաժողովի կողմից հակակոռուպցիոն ոլորտի միջազգային պարտավորությունների կատարմանն ուղղված աշխատանքների համակարգումը.

11) տրամադրում է Հանձնաժողովի գործառույթներին առնչվող ռազմավարական փաստաթղթերով նախատեսված՝ հակակոռուպցիոն ոլորտի միջոցառումների և ոլորտային միջազգային պարտավորությունների կատարման վերաբերյալ տեղեկատվություն, պարզաբանումներ, միջոցներ է ձեռնարկում Հանձնաժողովի կողմից ոլորտային միջազգային պարտավորությունների կատարումն ապահովելու ուղղությամբ:»

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ**

Վ. ՕՀԱՆՅԱՆ

27 փետրվարի 2023թ.
ք. Երևան